Արձանագրություն N 2

«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-69» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

18 օգոստոսի 2021թ.
Ժամը 11:00

Մասնակցում էին
հանձնաժողովի
Նախագահ՝ Ա.Պողոսյան
Անդամներ՝ Ն.Խաչատրյան, Ա.Երիցյան
Քարտուղար՝ Ս.Պապիկյան
Բացակայում էր՝ Ն.Խաչատրյան

1. **«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-69» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերաբերյալ.**
քարտուղարի կողմից 11:30-ին հայտերի գրանցամատյանը փակելուց հետո, նախագահը հրապարակել է նախահաշվային գները:

1.1 Գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը՝

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի տվյալները |
|---|---|---|
| 1. | «Էյ Բի Սի Ֆարմացիա» ՍՊԸ | ք.Երևան, Կինյան 2/8, հեռ. 091 00 13 66, e-mail: a.movsesyan@abc-pharm.com |

1.2 **Տվյալներ ծրարը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.**

Մասնակից ընկերության կողմից ներկայացված ծրարը կազմված է **«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-69»** ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.3 **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**
**«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-69»** ծածկագրով մրցույթի մասնակից՝ «Էյ Բի Սի Ֆարմացիա» ընկերությունը փակ կնքված ծրարով ներկայացրել է.

- ✓ Դիմում- հայտարարություն գնանշման հարցմանը մասնակցելու
- ✓ Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր
- ✓ գնային առաջարկ:

Վերոնշյալ կազմակերպության ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից:

1.4 **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.**
Վերոնշյալ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են **«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-69»** ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.5 **Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի վերաբերյալ / հհ դրամ/**

| № | անվանումը | Չ/մ | Քանակ | Նախահաշվային | | «Էյ Բի Սի Ֆարմացիա» ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | միավորի գին | գումար | առանց ԱՀՀ-ի | ԱՀՀ-ն ներառյալ |
| 1 | Դեղին տենդի դեմ պատվաստան | Դեղաչափ | 100 | 19 800 | 1 980 000 | 1 650 000 | 1 980 000 |

1.6. Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 38-րդ հոդվածը, մասնակցի հետ վարվել են գնային բանակցություններ, որի արդյունքում մասնակից ընկերությունը գինը նվազեցրել է 40 000 ՀՀ դրամով՝ առաջարկելով 1 940 000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով.

«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-69» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկը, ինչպես նաև այն հանգամանքը, որ № 1 չափաբաժնի համար մասնակից՝ «Էյ Բի Սի Ֆարմացիա» ՍՊ ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատվում է համարժեք:

2. Հանձնաժողովը որոշեց.

2.1 Հաղթող ճանաչել՝ «Էյ Բի Սի Ֆարմացիա» ՍՊ ընկերությանը:

2.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը, անգործության ժամկետ չի սահմանվում, հետևաբար պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել «Էյ Բի Սի Ֆարմացիա» ՍՊ ընկերությանը՝ 1 940 000 / մեկ միլիոն ինը հարյուր քառասուն հազար / ՀՀ դրամ գումարի չափով:

Ընդունվել է որոշում՝
Կողմ՝ 2 Դեմ՝ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի Նախագահ՝ | | Ա.Պողոսյան |
| Անդամ՝ | | Ա.Երիցյան |
| Քարտուղար՝ | | Ս.Պապիկյան |